



Մըսակ սարդից 'ի մեծարոյ ալեօք ծաղկեալը 'ի ճակատ,
Կիլիկիա ոլորեսցէ անմահական քեզ ուղէշ.
Եւ հրուչակ հանճարոյդ՝ զոր վառեն միտք հայրենասէր,
Թուուցեալ 'ի թեւս համբաւոյ հասցէ 'ի հուսկ ոլորտս երկրի:

Ոսկի քնարիդ. քաղցրիկ ձայն հընչեալ երբեմն հեշտալուր
Ընդ նոճիս սըգատներես, 'ի սիգ հողմոյն հեզաշունչ,
Մընչեաց գեղատըխուր. եւ լուռ հովիտք լերանցն Հայոց
Կըրկնեցին զարծագանգս ողբոց քոյին եւ զուարթ երգոց:

Կայծակն ոգւոյդ լուսամեւ ցեղեալ ըզմուծ անցելոյն,
Պարզեաց ըզքօղն աղջամրոջին. քեւ 'ի նոր փառս անդէն զարմեան
Մխուրեանն ալեօք զըւարթ եւ երկնահեմ՝ սար Մասեաց:

Ի հընչել մեծի ժամուն երանաւէտ ապառնւոյն,
Զեռն 'ի ձեռն տըւեալ Մնի, Սյաս զուգաբաղդ՝
Քեզ Տեղագրիդ՝ պաշտեսցեն զերախտեաց հարկ անմոռաց:

Հ. Գ. ՊՈՅԵԱՆ

